ՀՍՏ ԻՍՕ 21101-2025
Նախագիծ 2-րդ խմբագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Արկածային զբոսաշրջություն. Անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ

(ISO 21101:2014(E) + AMENDMENT 1: Climate action Changes 2024-02 IDT)

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ
ԵՐԵՎԱՆ 2025

Նախագիծ 2-րդ խմբագրություն

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և ստանդարտացման աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՍՏ 1.0-2001 «Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ» ստանդարտով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՏՀ 29 «Զբոսաշրջություն և հարակից ծառայություններ» տեխնիկական հանձնաժողովի կողմից:

3 ՀԱՍՏԱՏՎԵԼ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ Հայաստանի Հանրապետության Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի ղեկավարի _____ հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, N _____

5 Սույն ստանդարտում իրացված են «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները

6 ՀՍՏ ԻՍՕ 14785-2014-ի փոխարեն, ներառված է նաև *ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 1: Կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջոցառումներ 2024-02*

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրապարակվի նշված տեղեկատուի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ-ի ինտերնետային կայքում (www.armstandard.am):

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ-ի թույլտվության

Ներածություն

0.1 Արկածային զբոսաշրջություն

Արկածային զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացող ուղղություն է: Անկախ նրանից, թե գործունեությունը առևտրային է, ոչ առևտրային կամ բարեգործական, արկածային զբոսաշրջությունը ենթադրում է որոշակի ռիսկեր և մարտահրավերներ: Ռիսկի դիմելը բերում է եկամուտներ, բայց նաև ռիսկեր: Եկամուտները մեծացնելու համար արկածային զբոսաշրջության մատակարարները պետք է գործեն հնարավորինս անվտանգ:

Սույն ստանդարտը, ԻՍՕ/ՏՌ 21102-ը և ԻՍՕ 21103-ը հիմք են հանդիսանում արկածային զբոսաշրջային գործունեություն մատակարարների կողմից արկածային զբոսաշրջային գործունեությունը հնարավորինս անվտանգ պլանավորելու, դրանց մասին տեղեկացնելու և իրականացնելու համար:

Սույն ստանդարտի, ԻՍՕ/ՏՌ 21102-ը և ԻՍՕ 21103-ի պատշաճ կիրառումը կօգնի սպառողներին գիտակցված ընտրություն կատարել գործունեության ոլորտների և մատակարարների միջև:

0.2 Արկածային զբոսաշրջության ստանդարտները

Արկածային զբոսաշրջության ստանդարտների նպատակը անվտանգության կառավարման համակարգերի և մասնակիցների հետ հաղորդակցության նվազագույն պահանջների սահմանումն է: Դրանք առանձին միավորներ են, քանի որ վերաբերում են արկածային զբոսաշրջության տարբեր ոլորտներին:

— սույն ստանդարտը սահմանում է արկածային զբոսաշրջություն իրականացնող կազմակերպության գործունեության կառավարման եղանակը անվտանգության տեսանկյունից

— ԻՍՕ/ՏՌ 21102-ը տվյալներ է տրամադրում արկածային զբոսաշրջության գործունեության առաջնորդների իրավասությանը ներկայացվող նվազագույն պահանջների վերաբերյալ

— ԻՍՕ 21103-ը սահմանում է մասնակիցներին և պոտենցիալ մասնակիցներին տրամադրվող նվազագույն տեղեկատվությունը գործունեությունից առաջ, ընթացքում և հետո՝ անվտանգությունն ապահովելու նպատակով:

0.3 Սույն ստանդարտի նպատակը

Սույն ստանդարտի նպատակը արկածային զբոսաշրջության գործունեություն իրականացնող կազմակերպությունների անվտանգության կառավարման համակարգին ներկայացվող նվազագույն պահանջների սահմանումն է:

Ռիսկերի կառավարման գործընթացը անվտանգության կառավարման համակարգի անբաժանելի մասն է կազմում: Անվտանգության կառավարման համակարգը ապահովում է

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© **ARMSTANDARD** - Բոլոր իրավունքները պաշտպանված են

շարունակական բարելավման շրջանակ և ապահովում է անվտանգ արկածային զբոսաշրջային գործունեության իրականացմանը:

Անվտանգության կառավարման նկատմամբ համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս օպերատորներին վերլուծել իրենց արկածային զբոսաշրջային գործունեությունը, ըմբռնել մասնակիցների կարիքները, սահմանել անվտանգությունն ապահովելու գործընթացներ և այդ գործընթացները վերահսկողության տակ պահել:

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© **ARMSTANDARD** - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Արկածային զբոսաշրջություն. Անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ

Փոփոխություն 1. Կլիմայի փոփոխությանն ուղղված գործողություններ

Приключенческий туризм . Системы менеджмента безопасности. Требования. Изменение 1. Действия, связанные с изменением климата

Adventure tourism — Safety management systems — Requirements — AMENDMENT 1: Climate action changes

Գործարկման թվականը՝ 01.01.2026

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտը սահմանում է արկածային զբոսաշրջության գործունեություն մատակարարների/իրականացնողների/providers անվտանգության կառավարման համակարգին ներկայացվող պահանջները:

Մատակարարը հնարավորություն ունի կիրառել սույն ստանդարտը հետևյալ նպատակների համար.

ա (a) անվտանգության ցուցանիշները բարելավում

բ(b)մասնակիցների և անձնակազմի անվտանգությանն առնչվող ակնկալիքների բավարարում

գ(c) անվտանգ գործելակերպի իրականացում

դ(d) կիրառելի իրավական պահանջներին համապատասխանության ապահովում:

Սույն ստանդարտը կարող է կիրառվել տարբեր աշխարհագրական, մշակութային և սոցիալական միջավայրերում գործող բոլոր տեսակի և չափերի մատակարարների կողմից:

2 Նորմատիվ վկայակոչումները

Սույն փաստաթուղթը նորմատիվ վկայակոչումներ չունի:

3 Տերմինները և սահմանումները

Պաշտոնական հրատարակություն
©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD- Բոլոր իրավունքները պաշտպանված են

Սույն փաստաթղթի նպատակների համար կիրառվում են հետևյալ տերմիններն ու սահմանումները:

3.1 կազմակերպություն

en organization

անձ կամ անձանց խումբ, ովքեր ունեն իրենց գործառույթները, պարտականությունները, լիազորությունները և փոխհարաբերությունները՝ իրենց *նպատակներին(3.9)* հասնելու համար

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. կազմակերպության գաղափարը ներառում է, բայց չի սահմանափակվում անհատ ձեռնարկատիրոջով, ընկերությամբ, կորպորացիայով, ֆիրմայով, ձեռնարկությամբ, պետական մարմնով, գործընկերությամբ, բարեգործական կազմակերպությունով, հասարակական կազմակերպությամբ (ՀԿ), բարեգործական կազմակերպությամբ կամ ինստիտուտով, կամ դրանց մի մասով կամ դրանց համադրությամբ, գրանցված, թե չգրանցված, պետական, թե մասնավոր:

3.2 հետաքրքրված կողմ

en interested party

անձ կամ *կազմակերպություն (3.1),* որը կարող է ազդել, ազդվում է կամ զգում է իր ազդեցությունը որևէ որոշման կամ գործունեության վրա

3.3 պահանջ

en requirement

անհրաժեշտություն կամ ակնկալիք, որը հայտարարվում է, ընդհանուր առմամբ ենթադրվում է կամ պարտադիր է

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Ընդհանուր առմամբ ենթադրվող» նշանակում է, որ կազմակերպության և շահագրգիռ կողմերի համար տվյալ կարիքը կամ ակնկալիքը ենթադրելը սովորական կամ ընդունված պրակտիկա է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Սահմանված պահանջը այն պահանջն է, որը սահմանված է, օրինակ, փաստաթղթավորված տեղեկատվության մեջ:

3.4 կառավարման համակարգ

en management system

կազմակերպության (3.1) փոխկապակցված կամ փոխազդող տարրերի ամբողջություն, որոնք սահմանում են *քաղաքականությունը (3.7)* և *նպատակները (3.9)* և այդ նպատակները նվաճելու համար նախատեսված *գործընացները (3.13)*:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.Կառավարման համակարգը կարող է տարածվել մեկ կամ մի քանի ոլորտների վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Համակարգի տարրերը ներառում են կազմակերպությանկառուցվածքը, պարտականություններն ու պատասխանատվությունները, պլանավորումն ու գործողությունները և այլն:

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Կառավարման համակարգի կիրառման ոլորտը կարող է ներառել ողջ կազակերպությունը, կազմակերպության մասնահատուկ և հատկորոշված գործառույթները, կազմակերպության մասնահատուկ և հատկորոշված ստորաբաժանումները, կազմակերպություններիշրջանակներում իրականացվող մեկ կամ ավելի գործառույթները:

3.5 բարձրաստիճան ղեկավարություն

en top management

անձ կամ մարդկանց խումբ, որոնք իրականացնում են *կազմակերպության (3.1)* ղեկավարումը և հսկումը բարձրագույն մակարդակով

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Բարձրաստիճան ղեկավարությունն իրավունք ունի պատվիրակելու լիազորությունները և ապահովել ռեսուրսներ կազմակերպության շրջանակներում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Եթե *կառավարման համակարգի (3.4*) ոլորտը ներառում է միայն կազմակերպության մի մասը, ապա բաձրաստիճան ղեկավարություն ասելով հասկանում ենք նրանց, ովքեր իրականացնում են կազմակերպության այդ մասի ղեկավարումը և հսկում են այն:

3.6 արդյունավետություն

en effectiveness

Պլանավորած գործունեության իրականացման աստիճանը և պլանավորված արդյունքներին հասնելու աստիճանը

3.7 քաղաքականություն

en policy

կազմակերպության (3.1) մտադրությունները և ուղղությունը, որոնք պաշտոնապես ձևակերպված են իր *բարձրաստիճան ղեկավարության (3.5)* կողմից

3.8 անվտանգության քաղաքականություն

en safety policy

կազմակերպության *քաղաքականությունը (3.1)*՝ իր անվտանգության չափանիշների վերաբերյալ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Անվտանգության քաղաքականությունը տրամադրում է գործողությունների շրջանակ և սահմանում է անվտանգության նպատակները:

3.9 նպատակ

en objective

արդյունք որին պետք է հասնել

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.Նպատակը կարող է լինել ռազմավարական, տակտիկական կամ օպերատիվ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Նպատակները կարող են վերաբերել տարբեր ասպեկտների (ինչպիսիք են ֆինանսական նպատակները, առողջության և անվտանգության, էկոլոգիայի ոլորտի նպատակները),

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ինչպես նաև կիրառվել տարբեր մակարդակներով (օրինակ՝ ռազմավարական, ամբողջ կազմակերպության, նախագծի, արտադրանքի և գործընթացի (3.13)):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.Նպատակը կարող է արտահայտվել տարբեր եղանակներով, օրինակ՝ նախատեսված արդյունքի, մտադրության, աշխատանքի չափանիշի, որպես արկածային զբոսաշրջության անվտանգության նպատակ կամ նման նշանակությամբ այլ բառերով (օրինակ՝ ձգտում, նպատակ, խնդիր):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. Արկածային զբոսաշրջության անվտանգության համակարգերի համատեքստում որոշակի արդյունքների հասնելու նպատակով, կազմակերպության կողմից սահմանվում են կազմակերպության արկածային զբոսաշրջության անվտանգության քաղաքականությանը ներդաշնակ նպատակներ:

3.10 ռիսկ

en risk

անորոշության ազդեցություն

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ազդեցությունը սպասվող արդյունքից շեղումն է (դրական կամ բացասական):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ2. Անորոշությունը իրադարձության, դրա հետևանքների կամ դրա հավանականության, կամ դրա մասին ըմբռնման կամ գիտելիքների բացակայության, նույնիսկ մասնակի վիճակ է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ3. Ռիսկը հաճախ որոշում են հնարավոր իրադարձությունների (3.38) և դրանց հետևանքների (3.39) կամ դրանց համակցության վկայակոչմամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. Ռիսկը հաճախ արտահայտվում է իրադարձության հետևանքների (ներառյալ՝ հանգամանքների փոփոխությունները) և դրանց հետ կապված առաջացման հավանականության (3.41) համակցության տերմինաբանությամբ:

3.11 կոմպետենտություն

en competence

նախատեսված արդյունքների հասնելու նպատակով գիտելիքն ու հմտությունները կիրառելու կարողություն

3.12 փաստաթղթավորված տեղեկատվություն

en documented information

տեղեկատվություն, որը պետք է վերահսկվի և պահպանվի *կազմակերպության (3.1)* կողմից և այն պարունակող կրիչը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Փաստաթղթավորված տեղեկատվությունը կարող է լինել ցանկացած ձևաչափի և ցանկացած կրիչի վրա և ստացվել ցանկացած աղբյուրից:

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Փաստաթղթավորված տեղեկատվությունը կարող է վերաբերվել.

– *կառավարման համակարգի (3.4)* վերաբերյալ տեղեկատվությանը, ներառյալ հարակից *գործընթացները (3.13)*,

– կազմակերպության (3.1) գործունեության համար ստեղծված տեղեկատվությունը (կարող է դիտարկվել նաև որպես փաստաթղթեր).

– ձեռք բերված արդյունքների վկայությունները (կարող են դիտարկվել նաև որպես գրառումներ):

3.13 գործընթաց

en process

փոխկապակցված կամ փոխազդող գործողությունների ամբողջություն, որը մուտքերը փոխակերպում է ելքերի

3.14 կատարողական

en performance

չափելի արդյունք

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Կատարողականները կարող են վերաբերել ստացված քանակական և որակական արդյունքներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Կատարողականը կարող է վերաբերել գործունեության, *գործընթացների (3.13)*, ապրանքների (ներառյալ ծառայությունները), համակարգերի կամ *կազմակերպությունների (3.1)* կառավարմանը:

3.15 պատվիրակում

en outsource (verb)

համաձայնագրի կնքում, որի համաձայն արտաքին *կազմակերպությունը (3.1)* կատարում է կազմակերպության գործառույթի կամ *գործընթացի (3.13)* մի մասը

ԾԱՆՈԹՈ1ԹՅՈՒՆ 1. Արտաքին կազմակերպությունը ներառված չէ *կառավարման համակարգի (3.4)* ոլորտում, չնայած փոխանցված գործառույթը կամ գործընթացը գտնվում են կառավարման համակարգի ոլորտում:

3.16 մոնիթրինգ

en monitoring

համակարգի, *գործընթացի (3.13)* կամ գործունեության կարգավիճակի որոշում

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Կարգավիճակի որոշման համար կարող է ստուգելու, վերահսկելու կամ հետևելու անհրաժեշտություն առաջանալ:

3.17 չափում

en measurement

մեծության որոշման *գործընթաց (3.13)*

3.18 աուդիտ

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

en audit

աուդիտի ապացույցների ստացման և դրանց օբյեկտիվ գնահատման պարբերական, անկախ և փաստաթղթավորված *գործընթաց (3.13)*՝ աուդիտի չափանիշներին համապատասխանության աստիճանի որոշման համար

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Աուդիտը կարող է լինել ներքին աուդիտ (առաջին կողմ) կամ արտաքին աուդիտ (երկրորդ կամ երրորդ կողմ), և այն կարող է լինել համապարփակ աուդիտ (միավորել գործունեության երկու կամ ավելի ասպեկտներ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. «Աուդիտի ապացույցները» և «աուդիտի չափանիշները» սահմանված են ԻՍՕ 19011 ստանդարտումում:

3.19 համապատասխանություն

en conformity

պահանջի (3.3) կատարում

3.20 անհամապատասխանություն

en nonconformity

պահանջի (3.3) չկատարում

3.21 ուղղում

en correction

հայտնաբերված անհամապատասխանությունը վերացնելուն ուղղված *գործողություն (3.20)*

3.22 ուղղիչ գործողություն
en corrective action
անհամապատասխանության (3.20) պատճառը վերացնելու և դրա կրկնակի առաջացումը բացառելու գործողություն

3.23 շարունակական բարելավում
en continual improvement

կատարողականի(3.14) բարելավման համար կրկնվող գործունեություն

3.24 պատահար

en incident

իրադարձություն(3.38), որը կարող է հանգեցնել կամ հանգեցնում է *վթար (3.25)*

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.«Իրադարձություն» տերմինի բովանդակությունը կարող է ներառել *«գրեթե վթար/ նախավթարային իրավիճակ» և «վթար» (3.25)* հասկացությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. «Գրեթե վթար/ *նախավթարային իրավիճակ*» է կոչվում նաև այն միջադեպը, որի ժամանակ չի առաջանում հիվանդություն, վնասվածք, վնաս կամ որևէ այլ կորուստ:

3.25 վթար

en accident

մահվան, հիվանդության, վնասվածքի կամ այլ վնասի ելքով պատահար (3.24)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.«Միջադեպ» տերմինի բովանդակությունը կարող է ներառել *«գրեթե վթար/ նախավթարային իրավիճակ» և «վթար» (3.25)* հասկացությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. «Գրեթե վթար/ *նախավթարային իրավիճակ*» է կոչվում նաև այն միջադեպը, որի ժամանակ չի առաջանում հիվանդություն, վնասվածք, վնաս կամ որևէ այլ կորուստ:

3.26 վտանգ

en hazard

հնարավոր վնասի աղբյուր

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Վտանգը կարող է լինել ռիսկի աղբյուր:

[ԱՂԲՅՈՒՐ՝ ԻՍՕ Գայդ 73:2009, 3.5.1.4]

3.27 վտանգի նույնականացում

en hazard identification

վտանգի(3.26) առկայությունը հայտնաբերելու և դրա բնութագրերը սահմանելու գործընթ

3.28 ռիսկի նույնականացում

en risk identification

ռիսկերի(3.10) հայտնաբերման, ճանաչման և նկարագրման գործընթաց

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ռիսկի նույնականացումը ներառում է ռիսկի աղբյուրների, միջադեպերի (3.38), դրանց պատճառների և դրանց հնարավոր հետևանքների (3.39) նույնականացումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ռիսկի նույնականացումը կարող է ներառել ժամանակագրություն/historical data, տեսական վերլուծություն, տեղեկացված և փորձագիտական կարծիքներ, ինչպես *նաև հետաքրքրված կողմերի(3.2)* կարիքները:

3.29 ռիսկի գնահատական

en risk assessment

ռիսկի նույնականացման (3.28), ռիսկի վերլուծության (3.30) և ռիսկի գնահատման (3.32) ընդհանուր գործընթաց

[ԻՍՕ Գայդ 73:2009, 3.4.1 սահմանում]

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

3.30 ռիսկի վերլուծություն

en risk analysis

ռիսկի (3.10) բնույթը հասկանալու և *ռիսկի մակարդակը (3.31)* որոշելու գործընթաց

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ռիսկի վերլուծությունը հիմք է ապահովում ռիսկի գնահատման (3.32) և ռիսկի վրա ազդեցության (3.33) վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ռիսկի վերլուծությունը ներառում է ռիսկի գնահատում:

[ԱՂԲՅՈՒՌ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.6.1]

3.31 ռիսկի մակարդակ

en level of risk

ռիսկի (3.10) կամ ռիսկերի համակցության չափը՝ արտահայտված *հետևանքների (3.39)* համակցությամբ և դրանց *հավանականությամբ (3.41)*

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.6.1.8]

3.32 ռիսկի գնահատում

en risk evaluation

ռիսկի չափանիշների հետ ռիսկի վերլուծության (3.30) արդյունքների համեմատման գործընթացը՝ որոշելու համար ռիսկի (3.10) և /կամ դրա չափի ընդունելի կամ թույլատրելի լինելը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ռիսկի գնահատումն աջակցում է ռիսկերի վրա ազդեցությունների (3.33) վերաբերյալ որոշումների կայացմանը:

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.7.1]

3.33 ռիսկի վրա ազդեցություն

en risk treatment

ռիսկի (3.10) ձևափոխման գործընթաց

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ռիսկի վրա ազդեցությունը կարող է ներառել՝

- ռիսկից խուսափում՝ որոշելով չսկսել կամ չշարունակել ռիսկ առաջացնող գործողությունը,

- ռիսկի ընդունում կամ մեծացում՝ ռիսկի հնարավորությունները գտնելու համար,

- ռիսկի աղբյուրի վերացում,

- *հավանականության (3.41)* փոփոխություն,

- *հետևանքի (3.39)* փոփոխություն,

- ռիսկի բաժանում այլ կողմի կամ կողմերի (ներառյալ պայմանագրերի և ռիսկերի ֆինանսավորումը) հետ, և

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

- ռիսկի պահպանում՝ հիմնավորված որոշումով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Բացասական հետևանքներ ունեցող ռիսկերի վրա ազդեցությունները հաճախ կոչվում են «ռիսկերի նվազեցում», «ռիսկերի վերացում», «ռիսկերի կանխարգելում» և «ռիսկի կրճատում»:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Ռիսկի վրա ազդեցությունը կարող է առաջացնել նոր ռիսկեր կամ ձևափոխել գոյություն ունեցող ռիսկերը:

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.8.1 սահմանում]

3.34 անվտանգություն

en safety

վիճակ, որի դեպքում (անձանց) վնասի կամ վնասի *ռիսկը (3.10)* սահմանափակված է տանելի/ընդունելի մակարդակով

3.35 արկածային զբոսաշրջային գործունեություն

en adventure tourism activity

Արկածային զբոսաշրջության նպատակներով գործունեություն, որը պահանջում է որոշակի աստիճանի ուսուցում կամ ուղղորդում և գիտակցված *ռիսկի(3.10*) բաղադրիչ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Գիտակցված ռիսկի բաղադրիչ նշանակում է, որ մասնակիցն/participant ունի ռիսկի վերաբերյալ նվազագույն պատկերացում:

3.36 արկածային զբոսաշրջային ծառայություններ մատուցող

en adventure tourism activity provider

անձ կամ *կազմակերպություն (3.1*), որը *պատասխանատվություն (3.35)* է կրում արկածային զբոսաշրջության գործունեության բոլոր ուղղությունների/ասպեկտների համար ընդհանուր

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Արկածային զբոսաշրջային ծառայությունը կարող է մատուցվել անվճար կամ վճարովի:

3.37 մասնակից

en participant

անձ, որը մասնակից է *արկածային զբոսաշրջային գործունեությանը (3.35),* բայց ղեկավար թիմի անդամ չէ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Մասնակիցը կարող է նաև կոչվել «հաճախորդ», «օգտվող» կամ նման կերպ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ղեկավարների թիմը բաղկացած է մի քանի ղեկավարներից:

3.38 իրադարձություն

en event

որոշակի երևույթների առաջացում կամ փոփոխություն

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Իրադարձությունը կարող է լինել եզակի կամ բազմակի և կարող է ունենալ մի շարք պատճառներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Իրադարձությունը կարող է պարունակել մի շարք դեպքեր, որոնք չեն կատարվել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ3. Իրադարձությունը կարող է կոչվել նաև «պատահար» (3.24) կամ «վթար» (3.25)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. Առանց հետևանքների (3.39) իրադարձությունը կարող է կոչվել «գրեթե վթար», «դեպք», «գրեթե հարված», «ռիսկային իրավիճակ»:

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.5.1.3]

3.39 հետևանք

en consequence

իրադարձության (3.38) արդյունք, որն ազդում է նպատակների վրա

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Իրադարձությունը կարող է հանգեցնել մի շարք հետևանքների:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Հետևանքները կարող են լինել որոշակի կամ անորոշ և նպատակների վրա կարող են ունենալ դրական կամ բացասական ազդեցություններ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ3. Հետևանքները կարող են արտահայտվել որակապես կամ քանակսպես:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. Սկզբնական հետևանքները կարող են զարգանալ անուղղակի ազդեցությունների միջոցով:

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.6.1.3]

3.40 հնարավորություն

en probability

Իրադարձության հավանականության չափանիշ, որն արտահայտվում է 0-ից 1 միջակայքում գտնվող թվով, որտեղ 0-ն նշանակում է անհնարինություն, իսկ 1-ը՝ բացարձակ վստահություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Տես սահմանում 3.41, ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2:

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.6.1.4]

3.41 հավանականություն

en likelihood

որոշ դեպքերի տեղի ունենալու հնարավորություն

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ռիսկերի (3.10) կառավարման տերմինաբանության մեջ «հավանականություն» բառն օգտագործվում է որոշ դեպքերի հնրավորությունն արտահայտելու նպատակով՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ ձևով, որակապես կամ քանակապես սահմանված, չափված

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

կամ որոշված և նկարագրված ընդհանուր տերմինների օգնությամբ կամ մաթեմատիկորեն (օրինակ՝ տրված ժամանակահատվածում հնարավորությունը կամ հաճախականությունը):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Անգլերեն «հավանակություն» տերմինը որոշ լեզուներում չունի ուղղակի համարժեք: Դրա փոխարեն հաճախ օգտագործվում է «հնարավորություն» տերմինի համարժեքը: Այնուամենայնիվ, անգլերենում «հավանականությունը» հաճախ նեղ իմաստով մեկնաբանվում է որպես մաթեմատիկական տերմին: Հետևաբար, ռիսկերի կառավարման տերմինաբանության մեջ «հավանականությունը» օգտագործվում է այն իմաստով, որ այն պետք է ունենա նույն լայն մեկնաբանությունը, ինչ «հնարավորություն» տերմինը անգլերենից բացի շատ այլ լեզուներում:

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ Գայդ 73:2009, 3.6.1.1]

3.42 ընթացակարգ

en procedure

գործունեություն կամ գործընթաց (3.13) իրականացնելու սահմանված ուղի

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ընթացակարգերը կարող են լինել փաստաթղթավորված կամ առանց փաստաթղթավորման:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Եթե ընթացակարգը փաստաթղթավորված է, հաճախ օգտագործվում է «գրավոր ընթացակարգ» կամ «փաստաթղթավորված ընթացակարգ» տերմինը: Ընթացակարգ ներառող փաստաթուղթը կարելի է անվանել «ընթացակարգային փաստաթուղթ»:

[ԱՂԲՅՈՒՐ. ԻՍՕ 9000:2005, 3.4.5]

3.43 արտակարգ իրավիճակ

en emergency

անհետաձգելի գործողություններ պահանջող լուրջ իրավիճակ

3.44 երրորդ կողմի մատակարար

en third party provider

արտաքին *կազմակերպություն (3.1)* կամ անհատ, որը ծառայություններ է մատուցում *արկածային զբոսաշրջային ծառայություններ մատուցողին (3.36)*

4 Կազմակերպության միջավայրը/Context of the organization

4.1 Կազմակերպության և նրա միջավայրի ընկալումը

Կազմակերպությունը պետք է հստակեցնի իր սահմանած նպատակին համապատասխան արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի՝ նախատեսված արդյունքներին հասնելու կարողության վրա ազդող արտաքին և ներքին խնդիրները:

Կազմակերպությունը պետք է սահմանի կլիմայի փոփոխության խնդրի հրատապությունը:

4.2 Հետաքրքրված կողմերի կարիքների և ակնկալիքների ընկալումը

Կազմակերպությունը պետք է սահմանի.

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

- արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգին առնչվող շահագրգիռ կողմերը, և
- շահագրգիռ կողմերի պահանջները:

4.3 Արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի ոլորտի սահմանումը

Կազմակերպությունը, արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի կիրառման ոլորտը սահմանելու նպատակով պետք է որոշի դրա սահմանները և կիրառելիությունը:

Կիրառման ոլորտը սահմանելիս/որոշելիս կազմակերպությունը պետք է հաշվի առնի.

— 4.1-ում նշված արտաքին և ներքին խնդիրները, և

— 4.2-ում նշված պահանջները:

Կիրառման ոլորտը պետք է հասանելի լինի փաստաթղթավորված տեղեկատվության տեսքով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Համապատասխան շահագրգիռ կողմերը կարող են ներկայացնել կլիմայի փոփոխությանն առնչվող պահանջներ:

4.4 Արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգը

Կազմակերպությունը պետք է ստեղծի, ներդնի, պահպանի և անընդհատ բարելավի արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգ, ներառյալ անհրաժեշտ գործընթացները և դրանց փոխազդեցությունները՝ ըստ սույն ստանդարտի պահանջների:

5 Առաջնորդումը

5.1Առաջնորդումն ու կողմնակցությունը/ուղղվածությունը/պարտավորությունը Leadership and commitment

Բարձրագույն ղեկավարությունը պետք է առաջնորդի և պարտավորություն ստանձնի արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի նկատմամբ, հետևյալի միջոցով.

ա)(a) ապահովի, որ արկածային զբոսաշրջության անվտանգության քաղաքականությունն ու նպատակները սահմանվեն և համապատասխանեն կազմակերպության ռազմավարական ուղղությանը,

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

բ)(b) կազմակերպության բիզնես գործընթացներում արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի պահանջների ինտեգրման ապահովում,

գ)(c) արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիության ապահովում

դ(d) անվտանգության արդյունավետ կառավարման կարևորության և արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի պահանջներին համապատասխանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում

ե(e) ապահովի, որ արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգը հասնի նախատեսված արդյունք(ներ)ին,

զ(f) առաջնորդի և աջակցի այն մարդկանց, ովքեր աջակցում են արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի արդյունավետությանը,

է(g) շարունակական բարելավման խթանում,

ը(h) աջակցում այլ համապատասխան կառավարման գործառույթներին՝ իրենց պատասխանատվության ոլորտներին վերաբերող իրենց առաջնորդական հմտությունները դրսևորելու հարցում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.Սույն ստանդարտում «բիզնես» բառին հղումը կարող է մեկնաբանվել լայն իմաստով և նշանակում է այն գործունեությունը, որը հիմնարար նշանակություն ունի կազմակերպության գործունեության նպատակների համար:

5.2 Քաղաքականությունը

Բարձրագույն ղեկավարությունը պետք է մշակի արկածային զբոսաշրջության անվտանգության քաղաքականություն, որը.

ա)(a) համապատասխանում է կազմակերպության նպատակին,

բ)(b) ապահովում է արկածային զբոսաշրջության անվտանգության նպատակներ սահմանելու հիմնավորումը, մի գուցե *հիմնավորում է արկածային զբոսաշրջության անվտանգության նպատակների սահմանումը*

գ)(c) ներառում է համապատասխան պահանջները բավարարելու պարտավորություն, և

դ(d) ներառում է արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի շարունակական բարելավման հանձնառություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այս համատեքստում կիրառելի պահանջները ներառում են օրենքներ և ստանդարտներ:

Արկածային զբոսաշրջության անվտանգության քաղաքականությունը պետք է.
— հասանելի լինի փաստաթղթավորված տեղեկատվության ձևով,
— ծանուցվի/իրազեկվի կազմակերպության ներսում,
— հասանելի լինի շահագրգիռ կողմերին, ըստ անհրաժեշտության:

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

5.3 Անձնակազմի նշանակումը, պարտականությունները և լիազորությունները

Բարձրագույն ղեկավարությունը պետք է ապահովի համապատասխան անձնակազմի պարտականությունների ու լիազորությունների նշանակումը և ծանուցումը կազմակերպության ներսում:

Բարձրագույն ղեկավարությունը պետք է լիազորությունները և պատասխանատվությունը նշանակի հետևյալ նպատակներով.

ա)(a) սույն ստանդարտի սահմանած պահանջներին՝ արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի համապատասխանության ապահովման

բ)(b) բարձրագույն ղեկավարությանը արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի կատարողականի վերաբերյալ հաշվետվության ներկայացման:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Համապատասխան նշանակումները նրանք են, ովքեր ազդում են անվտանգության վրա, ներառյալ արկածային զբոսաշրջության գործունեության առաջնորդները:

6 Պլանավորումը

6.1 Ռիսկերը նվազեցնելուն և հնարավորություններին ուղղված գործողությունները

6.1.1 Հիմնական դրույթները

Արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգը պլանավորելիս կազմակերպությունը պետք է հաշվի առնի 4.1-ում նշված խնդիրները և 4.2-ում նշված պահանջները և դիտարկի այն ռիսկերն ու հնարավորությունները, որոնք պետք է հաշվի առնել, որպեսզի.

— ապահովի, որ արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգը կարողանա հասնել իր նախատեսված արդյունքին(ներին)

— կանխի կամ նվազեցնի անցանկալի հետևանքները

— հասնի շարունակական բարելավման:

Կազմակերպությունը պետք է պլանավորի.

ա)(a) նշված ռիսկերն ու հնարավորությունները հաղթահարելու միջոցառումները, և

բ)(b) ինչպես՝

— ինտեգրի և իրականացնի գործողությունները արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի՝ իր անհատական գործընթացներում:

— գնահատի այդ գործողությունների արդյունավետությունը:

6.1.2 Արկածային զբոսաշրջության ռիսկերի կառավարման գործընթացը

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Կազմակերպությունը պետք է մշակի և ներդնի արկածային զբոսաշրջային գործունեության համար համակարգված ռիսկերի իր անհատական կառավարման գործընթացը:

Ռիսկերի կառավարման գործընթացը պետք է սահմանի գործունեության բովանդակությունը/համատեքստը, գնահատի ռիսկերը, անդրադառնա դրանց և փաստաթղթավորվի:

Ռիսկերի կառավարման գործընթացը պետք է լինի արկածային զբոսաշրջության կազմակերպության անվտանգության կառավարման համակարգի անբաժանելի մասը:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես Հավելված Ա(A)-ն:

6.1.3 Իրավական պահանջները

Կազմակերպությունը պետք է մշակի, ներդնի և պահպանի համապատասխան իրավական և այլ պահանջները նույնականացնելու ընթացակարգեր:

Կազմակերպությունը պետք է համապատասխանի համապատասխան իրավական և այլ պահանջներին:

Կազմակերպությունը պետք է իրավական և այլ պահանջների վերաբերյալ պատշաճ ծանուցի իր աշխատակիցներին, մատակարարներին, գործունեության մասնակիցներին և այլ շահագրգիռ կողմերին:

6.2 Արկածային զբոսաշրջության անվտանգության նպատակները և դրանց հասնելու պլանավորումը

Կազմակերպությունը պետք է սահմանի անվտանգության նպատակներ արկածային զբոսաշրջության համար համապատասխան գործառույթների և մակարդակների համար:

Անվտանգության նպատակները պետք է.

ա(a) համապատասխանեն անվտանգության քաղաքականությանը

բ(b) լինեն չափելի (եթե գործնականում հնարավոր է)

գ(c) հաշվի առնեն համապատասխան պահանջները

դ(d) լինեն վերահսկելի

ե(e) լինեն հաղորդակցվող, և

զ(f) անհրաժեշտության դեպքում թարմացվեն:

Անվտանգության նպատակներ սահմանելիս բարձրագույն ղեկավարությունը պետք է հաշվի առնի հետևյալը՝

ա(a) ակնկալվող/հնարավոր եկամուտը

բ(b) վտանգներն ու ռիսկերը

գ(c) տեխնիկական սարքավորումները և կիրառումը

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

դ(d) հաղորդակցման մեթոդները

ե(e ֆինանսական, գործառնական և գործարար պահանջները,

զ(f) շահագրգիռ կողմերի տեսակետները:

Կազմակերպությունը պետք է պահպանի արկածային զբոսաշրջության անվտանգության նպատակների վերաբերյալ փաստաթղթավորված տեղեկատվություն:

Արկածային զբոսաշրջության անվտանգության նպատակներին հասնելու ուղիները պլանավորելիս կազմակերպությունը պետք է սահմանի.

— ի՞նչ է արվելու

— ի՞նչ ռեսուրսներ են պահանջվելու

— ո՞վ է պատասխանատուն

— ե՞րբ է այն ավարտվելու

— ինչպե՞ս են գնահատվելու արդյունքները:

Արկածային զբոսաշրջության անվտանգության ծրագրերը պարբերաբար վերանայվում և թարմացվում են՝ գործունեության կամ շահագործման պայմանների փոփոխությունները արտացոլելու նպատակով:

Ռիսկերի կառավարման փաստաթղթավորումը պետք է դիտարկել որպես արկածային զբոսաշրջության անվտանգության նպատակների իրագործման պլանավորման մաս:

7 Աջակցությունը

7.1 Ռեսուրսները

Կազմակերպությունը պետք է սահմանի և տրամադրի արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի ստեղծման, ներդրման, պահպանման և շարունակական կատարելագործման համար անհրաժեշտ ռեսուրսները:

7.2 Կարողությունը/կոմպետենտությունը/Competence

Կազմակերպությունը պետք է.

ա(a) որոշի իր հսկողության ներքո արկածային զբոսաշրջության ոլորտում անվտանգության ապահովման վրա ազդող աշխատանք կատարող անձի(անձանց) պահանջվող իրավասությունը

բ(b) համապատասխան կրթության, վերապատրաստման կամ փորձի վրա հիմնվելով՝ ապահովի այդ անձանց կոմպետենտությունը

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

գ(c) անհրաժեշտության դեպքում, գործողություններ ձեռնարկի անհրաժեշտ կարողությունները ձեռք բերելու և ձեռնարկված գործողությունների արդյունավետությունը գնահատելու ուղղությամբ

դ(d) պահպանի համապատասխան փաստաթղթավորված տեղեկատվությունը որպես կոմպետենտության հիմնավորում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Կիրառվող միջոցառումները կարող են ներառել, օրինակ, տվյալ պահին աշխատող անձանց վերապատրաստումը, մենթորությունը կամ տեղափոխումը, կամ կոմպետենտ անձանց հավաքագրումը կամ նշանակումը:

Անհրաժեշտության դեպքում պետք է կիրառվեն ազգային մակարդակում ընդունված որակավորումները:

7.3 Տեղեկացվածությունը

Կազմակերպության հսկողության ներքո աշխատող անձինք պետք է տեղյակ լինեն հետևյալ կետերին.

ա(a) արկածային զբոսաշրջության անվտանգության ուղեցույցին

բ(b) արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության մեջ անձանց ներդրումը, ներառյալ անվտանգության բարելավման առավելությունները

գ(c) արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի պահանջներին չհամապատասխանելու հետևանքներին:

Անվտանգությանն առնչվող գործառույթներ ունեցող անձինք պետք է ցույց տան իրենց նվիրվածությունը արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության անընդհատ բարելավմանը:

7.4 Հաղորդակցությունը

7.4.1 Հիմնական դրույթները

Կազմակերպությունը պետք է սահմանի արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգին առնչվող ներքին և արտաքին հաղորդակցության կարիքները, ներառյալ.

ա(a) այն, թե ինչ պետք է հաղորդել

բ(b) երբ պետք է հաղորդակցվել

գ(c) ում հետ հաղորդակցվել

դ(d) ինչպես հաղորդակցվել:

7.4.2 Հաղորդակցություն և խորհրդատվություն արկածային զբոսաշրջության գործունեության կազմակերպման մեջ ներգրավված անձանց հետ

Կազմակերպությունը պետք է մշակի արկածային զբոսաշրջության գործունեության

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

կազմակերպման մեջ ներգրավված անձնակազմի և այլ անձանց հետ հաղորդակցման և խորհրդակցության գործընթաց՝ որպեսզի ապահովի նրանց համար.

ա(a) ներգրավվածություն անվտանգության կառավարման քաղաքականության և ընթացակարգերի մշակման և վերանայման մեջ

բ(b) խորհրդատվություն՝ արկածային զբոսաշրջային գործունեություն իրականացնելիս նրանց անվտանգության վրա ազդող ցանկացած փոփոխության դեպքում

գ(c) ներկայացվեն անվտանգությանն առնչվող հարցերում, և

դ(d) տեղեկացվածություն, թե ով է ներկայացնում իրենց անվտանգության հարցերում և ով է ներկայացնում բարձրագույն ղեկավարությանը:

Այս գործընթացը պետք է փաստաթղթավորել:

7.4.3 Մասնակիցների հետ հաղորդակցությունը և խորհրդատվությունը

Կազմակերպությունը պետք է մշակի մասնակիցների հետ հաղորդակցման և խորհրդակցության գործընթաց՝ հետևյալն ապահովելու նպատակով.

— մասնակիցներին անվտանգության վերաբերյալ տեղեկատվության փոխանցում, և

— խնդրանք մասնակիցներից կազմակերպությանը տրամադրել այնպիսի տեղեկատվություն, որը կարող է ազդել անվտանգության կառավարման վրա:

Այս գործընթացը պետք է փաստաթղթավորել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Լրացուցիչ տեղեկությունների համար տես ԻՍՕ 21103 ստանդարտը:

7.5 Փաստաթղթավորված տեղեկատվությունը

7.5.1 Հիմնական դրույթները

Կազմակերպության արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգը պետք է ներառի.

ա(a) այս միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան փաստաթղթավորված տեղեկատվություն

բ(b) փաստաթղթավորված տեղեկատվություն, որը կազմակերպությունը համարում է անհրաժեշտ՝ արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի համար փաստաթղթավորված տեղեկատվության ծավալը տարբեր կազմակերպություններում կարող է տարբերվել, որը պայմանավորված հետևյալով.

— կազմակերպության չափը և դրա գործունեության, գործընթացների, պրոդուկտների և ծառայությունների տեսակը,

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

— գործընթացների բարդությունը և դրանց փոխազդեցությունները, և

— անձանց կարողությունները:

Կազմակերպությունը պետք է ստեղծի և պահպանի փաստաթղթավորված տեղեկատվություն հետևյալի համար.

— արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի հիմնական բաղադրիչների նկարագրությունը և դրանց փոխազդեցությունը, և

— ուղեցույց համապատասխան փաստաթղթավորված տեղեկատվության վերաբերյալ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ2. Փաստաթղթավորված տեղեկատվությունը ներառում է փաստաթղթավորված ընթացակարգեր և գրառումներ:

7.5.2 Ստեղծումը և թարմացումը

Փաստաթղթավորված տեղեկատվությունը ստեղծելիս և թարմացնելիս կազմակերպությունը պետք է ապահովի հետևյալը.

ա(a) նույնականացում և նկարագրություն (օրինակ՝ վերնագիր, ամսաթիվ, հեղինակ կամ հղում):

բ(b) ձևաչափ (օրինակ՝ լեզու, ծրագրային տարբերակ, գրաֆիկա) և կրիչ (օրինակ՝ թղթային, էլեկտրոնային):

գ(c) վերանայում և հաստատում համապատասխանության և նպատակահարմարության համար:

7.5.3 Մասնակիցների հետ հաղորդակցությունը և խորհրդատվությունը

Արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի և սույն ստանդարտով պահանջվող փաստաթղթավորված տեղեկատվությունը պետք է վերահսկել՝ հետևյալն ապահովելու նպատակով.

— օգտատերերի համար՝ լինի հասանելի և հարմար որտեղ և երբ անհրաժեշտ է,

— լինի բավարար կերպով պաշտպանված (օրինակ՝ գաղտնազերծումից, ոչ պատշաճ կիրառումից կամ ամբողջականության կորստից):

Փաստաթղթավորված տեղեկատվությունը վերահսկելու համար կազմակերպությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է իրականացնի հետևյալ գործողությունները.

ա(a) բաշխում, հասանելիություն, որոնում և օգտագործում

բ(b) պահում և պահպանում, ներառյալ ընթեռնելիության պահպանումը

գ(c)փոփոխությունների վերահսկողություն (օրինակ՝ տարբերակների վերահսկողություն)

դ(d) պահպանում և հեռացում:

Արտաքին ծագման փաստաթղթավորված տեղեկատվությունը, որը կազմակերպությունը անհրաժեշտ է համարում արկածային զբոսաշրջության անվտանգության

կառավարման համակարգի պլանավորման և գործունեության համար, պետք է համապատասխանաբար նույնականացնել և վերահսկել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հասանելիությունը ենթադրում է որոշում՝ փաստաթղթավորված տեղեկատվությունը միայն դիտելու թույլտվության կամ փաստաթղթավորված տեղեկատվությունը դիտելու և փոփոխելու թույլտվության և լիազորությունների վերաբերյալ և այլն:

Պահպանման պայմանները պետք է համապատասխանեն արկածային զբոսաշրջության կազմակերպության անվտանգության կառավարման համակարգին և ցանկացած պայմանագրային, իրավական կամ այլ պարտավորություններին: Պահպանման պայմանները պետք է լինեն փաստաթղթավորված:

8 Գործունեությունը

8.1 Գործունեության պլանավորումը և վերահսկողությունը

Կազմակերպությունը պետք է պլանավորի, իրականացնի և վերահսկի պահանջները բավարարելու և 6.1-ում նշված գործողությունները իրականացնելու համար անհրաժեշտ գործընթացները՝ հետևյալ եղանակով.

— գործընթացների համար չափանիշների սահմանում

— չափանիշներին համապատասխան գործընթացների վերահսկողություն

—փաստաթղթավորված տեղեկատվության պահպանում այն ծավալով, որքանով դա անհրաժեշտ է գործընթացների կատարումն ըստ նախատեսվածի ապահովելու համար:

Կազմակերպությունը պետք է վերահսկի նախատեսված փոփոխությունները և վերլուծի չնախատեսված փոփոխությունների հետևանքները՝ անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով միջոցներ ցանկացած անբարենպաստ ազդեցություն մեղմելու համար:

Կազմակերպությունը պետք է ապահովի արտապատվիրակման գործընթացների վերահսկողությունը:

Կազմակերպությունը պետք է անվտանգության նպատակներին հասնելու և 6.2 կետում նշված ռիսկերը վերացնելու համար մշակի և իրականացնի ծրագրեր, այդ թվում՝ այլընտրանքային ծրագրեր:

Կազմակերպությունը պետք է իր գործունեությունը պլանավորի այնպես, որ ապահովի դրանց արդյունավետ իրականացումը.

ա)(a) Սահմանի և պահպանի արկածային զբոսաշրջության գործունեության իրականացման փաստաթղթավորված ընթացակարգեր, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել անվտանգության քաղաքականությունից և նպատակներից շեղման: Այս ընթացակարգերը պետք է ներառեն կանխարգելիչ միջոցառումներ և մասնակիցների ու անձնակազմի անվտանգությունն ապահովող միջոցառումներ

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

բ)(b) արկածային զբոսաշրջության գործունեության մեջ կիրառվող ապրանքների, սարքավորումների և ծառայությունների հետ կապված ընթացակարգերի սահմանում և պահպանում, որոնք կարող են ազդել անվտանգության վրա

գ(c) մասնակիցների համար պահանջվող նվազագույն կարողությունների սահմանումը և փաստաթղթավորումը

դ(d) գործունեությունն անվտանգ իրականացնելու համար մասնակիցներին անհրաժեշտ նվազագույն կարողությունների առկայության ապահովում:

8.2 Արտակարգ իրավիճակների դեպքում պատրաստվածությունն ու արձագանքը

Կազմակերպությունը պետք է նույնականացնի հնարավոր արտակարգ իրավիճակները և դրանց հետևանքները, մշակի ու պահպանի արձագանքման ծրագրեր և ընթացակարգեր:

Կազմակերպությունը պետք է ապահովի համապատասխան ծառայությունների, իրավասու անձանց կամ այլ ռեսուրսների առկայությունը՝ արտակարգ իրավիճակների համար նախատեսված ծրագրերն ու ընթացակարգերը իրականացնելու համար:

Կազմակերպությունը պետք է թարմացնի իր արտակարգ իրավիճակներին արձագանքման ծրագրերն ու ընթացակարգերը:

Կազմակերպությունը պետք է ունենա ընթացակարգ՝ յուրաքանչյուր մասնակցից հետևյալ նվազագույն տեղեկատվությունը հավաքելու համար.

ա)(a) անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (օրինակ՝ անձնագրի համար, լրիվ անուն, ազգանուն)

բ)(b) արտակարգ իրավիճակներում կոնտակտային տվյալներ (ներառյալ անունը և կապի միջոցները)

գ(c) հատուկ օգնության անհրաժեշտություն

դ(d) առողջական և բժշկական վիճակները:

Կազմակերպությունը պետք է պարբերաբար փորձարկի իր՝ արտակարգ իրավիճակներին արձագանքման ընթացակարգերը: Փորձարկման արդյունքները պետք է փաստաթղթավորվեն:

8.3 Միջադեպերի կառավարումը

Կազմակերպությունը պետք է մշակի և պահի պատասխանատվություններն ու լիազորությունները սահմանող հետևյալ ընթացակարգերը.

— միջադեպերի ժամանակ գործելը, դրանց մասին հաղորդելը և վերլուծությունը

— միջադեպերից բխող ցանկացած հետևանքները նվազեցնելու համար միջոցառումների ձեռնարկումը:

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Միջադեպերի վերաբերյալ փաստաթղթերը պետք է ներառեն առնվազն հետևյալ տեղեկությունները.

ա)(a) գործունեությունը
բ)(b) ամսաթիվը և ժամը
գ)(c) գտնվելու վայրը
դ(d) ներգրավված մարդիկ՝ մասնակիցները և անձնակազմը
ե(e)շրջակա միջավայրի պայմանների, սարքավորումների և հատուկ գործողությունների կամ հանգամանքների նկարագրությունը
զ(f) հավանական պատճառները և ուղեկցող գործոնները
է(g) արձագանքը, ներառյալ ցանկացած բժշկական միջամտությունը
ը(h) հետևանքները
թ(i) կարգավորող գործողությունները
ժ(j) տեղեկատվության աղբյուրը:

Կազմակերպությունը պետք է ունենա միջադեպերի գրանցման ընթացակարգ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Միջադեպերի գրանցումը և վերլուծությունը օգնում է կանխել միջադեպերը հետագայում, գնահատել արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի արդյունավետությունը և վերահսկել ռիսկերը:

9 Արդյունավետության գնահատումը

9.1 Մոնիթորինգը, չափումը, վերլուծությունը և գնահատումը

Կազմակերպությունը պետք է սահմանի.

— ինչն է անհրաժեշտ մոնիթորինգ անել և չափել

— անհրաժեշտության դեպքում՝ մոնիթորինգի, չափման, վերլուծության և գնահատման մեթոդները՝ հավաստի արդյունքներ ապահովելու համար

— երբ պետք է իրականացվնել մոնիթորինգ և չափումներ

— երբ պետք է վերլուծել և գնահատել մոնիթորինգի և չափման արդյունքները

— ինչպես պետք է փաստաթղթավորել մոնիթորինգի, չափման, վերլուծության և գնահատման արդյունքները:

Մոնիթորինգը և չափումը պետք է ապահովեն.

ա)(a) անվտանգության կառավարման ծրագրերի պահանջներին և կիրառելի իրավական պահանջներին համապատասխանությունը
բ)(b) միջադեպերի և նախորդ տարիների տվյալների քննարկում
գ)(c) մասնակիցների փորձի և հետ արձագանքի feedback դիտարկում

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Կազմակերպությունը պետք է պահպանի համապատասխան փաստաթղթավորված տեղեկատվությունը որպես արդյունքների վկայություն:

Կազմակերպությունը պետք է գնահատի արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի անվտանգության կատարողականը և արդյունքների արդյունավետությունը:

9.2 Ներքին աուդիտը

Կազմակերպությունը պետք է պլանավորված ժամանակահատվածներում անցկացնի ներքին աուդիտներ, որպեսզի տեղեկատվություն ստանա այն մասին, թե արդյոք արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգը.

— համապատասխանում է.

— կազմակերպության սեփական պահանջները արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման տվյալ համակարգին

— սույն ստանդարտի պահանջներին

— իրականացվում և պահպանվում է արդյունավետ եղանակով:

Կազմակերպությունը պետք է.

ա)(a) պլանավորի, ստեղծի, իրականացնի և պահպանի աուդիտի ծրագիր(ներ) (ներառյալ հաճախականությունը, մեթոդները, պարտականությունները, պլանավորման պահանջները և հաշվետվությունը), որը պետք է հաշվի առնի համապատասխան գործընթացների կարևորությունը և նախորդ աուդիտների արդյունքները

բ)(b) յուրաքանչյուր աուդիտի համար սահմանի աուդիտի չափանիշները և ոլորտը

գ)(c) աուդիտի գործընթացի օբյեկտիվությունն ու անաչառությունն ապահովելու նպատակով սահմանի աուդիտորներ և անցկացնի աուդիտներ

դ(d) ապահովի, որ աուդիտների արդյունքները ներկայացվեն համապատասխան ղեկավարությանը, և

ե(e) պահպանի փաստաթղթավորված տեղեկատվությունը որպես աուդիտի ծրագրի իրականացման և աուդիտի արդյունքների հավաստում:

Կազմակերպության աուդիտի ծրագիրը պետք է հաշվի առնի կազմակերպության գործունեության վերաբերյալ իրականացված ռիսկերի գնահատման արդյունքները (տե՛ս 6.1.2) և նախորդ աուդիտների արդյունքները:

9.3 Ղեկավարության կողմից վերլուծությունը

Բարձրագույն ղեկավարությունը պետք է սահմանված ժամանակահատվածներում վերլուծի արկածային զբոսաշրջության կազմակերպության անվտանգության կառավարման համակարգը՝ ապահովելու համար դրա շարունակական պիտանիությունը, համարժեքությունը և արդյունավետությունը:

Ղեկավարության կողմից վերլուծությունը պետք է հաշվի առնի հետևյալ գործոնները.

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ա)(a) նախորդ ղեկավարության կողմից իրականացված վերլուծություններից ստացված միջոցառումների կարգավիճակը

բ)(b) արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգին առնչվող արտաքին և ներքին հարցերի փոփոխությունները

գ)(c) տեղեկատվություն արկածային զբոսաշրջության անվտանգության ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ միտումները.

1) անհամապատասխանություններ և կարգավորիչ գործողություններ
2) մոնիթորինգի և չափման արդյունքները, և
3) աուդիտի արդյունքները

դ(d) հնարավորությունները շարունակականբարելավման համար:

Ղեկավարության կողմից վերլուծության արդյունքները պետք է ներառեն շարունակական բարելավման հնարավորությունների և արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգում փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ որոշումները:

Կազմակերպությունը պետք է պահպանի փաստաթղթավորված տեղեկատվությունը որպես ղեկավարության կողմից վերլուծությունների արդյունքների հավաստում:

10 Բարելավումը

10.1 Անհամապատասխանությունը և կարգավորող գործողությունները

Անհամապատասխանության դեպքում կազմակերպությունը պետք է.

ա)(a) անհամապատասխանությանը արձագանքի և, անհրաժեշտության դեպքում.

1) միջոցներ ձեռնարկի այն վերահսկելու և շտկելու համար, և

2) վերացնի հետևանքները

բ)(b) գնահատի անհամապատասխանության պատճառները վերացնելու համար գործողությունների անհրաժեշտությունը՝ դրա կրկնությունը կամ այլ վայրում առաջացումը կանխելու համար.

1) անհամապատասխանության վերահսկումը

2) անհամապատասխանության պատճառների սահմանումը, և

3) որոշի, թե արդյոք առկա են նմանատիպ անհամապատասխանություններ կամ հնարավոր է առաջանան,

գ)(c) իրականացնի ցանկացած անհրաժեշտ գործողություն

դ(d) վերանայի ձեռնարկված ցանկացած կարգավորող գործողության արդյունավետությունը, և

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ե(e) անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարի արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգում:

Կարգավորող գործողությունները պետք է համապատասխանեն հայտնաբերված անհամապատասխանությունների հետևանքներին:

Կազմակերպությունը պետք է պահպանի փաստաթղթավորված տեղեկատվությունը որպես հավաստում.

— անհամապատասխանությունների բնույթը և հետագա ձեռնարկված ցանկացած գործողություն, և

— ցանկացած կարգավորող գործողության արդյունքները:

10.2 Անհամապատասխանությունը և կարգավորող գործողությունները

Կազմակերպությունը պետք է շարունակաբար բարելավի արկածային զբոսաշրջության անվտանգության կառավարման համակարգի պիտանիությունը, բավարարությունը և արդյունավետությունը:

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Հավելված Ա(A)

(նորմատիվ)

Արկածային զբոսաշրջության ռիսկերի կառավարման գործընթացը

Ա(A).1 Հիմնական դրույթները

Սույն հավելվածը վերաբերում է 6.1.2-ին, որը ներկայացնում է արկածային զբոսաշրջության ռիսկերի կառավարման գործընթացի երեք քայլ.

ա)(a) բովանդակության սահմանում

բ)(b) ռիսկի գնահատում

գ)(c) ռիսկերի կարգավորում

Ա(A).2 Բովանդակության սահմանումը

Կազմակերպությունը պետք է սահմանի յուրաքանչյուր արկածային զբոսաշրջային գործունեության բովանդակությունը:

Բովանդակությունը պետք է սահմանել՝ որոշելով յուրաքանչյուր գործունեության ռիսկերի կառավարման նպատակները, շրջանակը և չափանիշները:

Կազմակերպությունը պետք է սահմանի.

ա)(a) արկածային զբոսաշրջության գործունեությունը

բ)(b) գործունեության ոլորտը՝ վայրը, տևողությունը և գործունեության ոլորտում բոլոր գործողությունները

գ)(c) գործունեությանն առնչվող ռիսկերի կառավարման նպատակները

դ(d) սահմանները և այլ գործունեության կամ անվտանգության կառավարման համակարգերի հետ փոխազդեցությունները

ե(e) ռիսկի գնահատման մեթոդաբանությունը

զ(f) ռիսկի գնահատման չափանիշները (ներառյալ տանելի ռիսկի մակարդակը) և հիմնավորումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Գործունեության բովանդակության սահմանումը կարող է ներառել տրանսպորտի, կացարանի, շրջակա միջավայրի, բժշկական կամ մշակութային ռիսկերի հետ առնչվող հարցեր:

Ա(A).3 Ռիսկի գնահատումը

Գոյություն ունի ռիսկի գնահատման երեք քայլ .

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

ա(a) Ռիսկի նույնականացում

Արկածային զբոսաշրջային գործունեության ռիսկերի շարունակական բացահայտման համար կազմակերպությունը պետք է ստեղծի և պահպանի համակարգված, կառուցվածքային գործընթաց:

Ռիսկի նույնականացման ընթացակարգերը պետք է ներառեն.

- ընթացիկ և չպլանավորած գործունեությունը
- մասնակցի կոմպետենտությունը
- վերահսկվող և չվերահսկվող գործունեությունը և գործունեության վայրերը
- արկածային զբոսաշրջության գործունեության աշխատավայրեր և վայրեր մուտք ունեցող ամբողջ անձնակազմի (ներառյալ ենթակապալառուները, մասնակիցները և այցելուները) գործունեությունը
- կազմակերպության, մասնակիցների և երրորդ կողմի միջոցով տրամադրվող արկածային զբոսաշրջային գործունեության մեջ օգտագործվող հարմարանքները, հագուստը և սարքավորումները

Ռիսկերի նույնականացման մեթոդաբանությունը պետք է.

- ներգրավի ղեկավարներին և այլ շահագրգիռ կողմերին
- համապատասխանի կիրառվող փորձին
- հետևի արկածային զբոսաշրջության ժամանակակից, ընդունված գործելակերպին:

բ(b) Ռիսկերի վերլուծություն

Կազմակերպությունը պետք է վերլուծի ռիսկը՝ հաշվի առնելով ռիսկի պատճառներն ու աղբյուրները, դրանց դրական և բացասական հետևանքները, ինչպես նաև այդ հետևանքների առաջացման հավանականությունը: Պետք է հաշվի առնել վերահսկողության առկա մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

գ(c) Ռիսկի գնահատում

Կազմակերպությունը պետք է գնահատի ռիսկերը՝ համեմատած ռիսկի գնահատման չափանիշների հետ և բացահայտի այն ռիսկերը, որոնք կարգավորում են պահանջում:

Ա(A).4 Ռիսկի կարգավորումը

Կազմակերպությունը պետք է ստեղծի, ներդնի և պահպանի ռիսկերի կառավարման գործընթաց:

Կազմակերպությունը պետք է սահմանի պարտականությունները, ժամկետները, ակնկալվող արդյունքները, ռեսուրսները, կատարողականի չափանիշները և վերանայման գործընթացները ռիսկերի կառավարման համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես ԻՍՕ 31000 ստանդարտը: ԻՍՕ 31000 ստանդարտի նպատակը ռիսկերի կառավարման գործընթացները գործող և հետագայում ստեղծվող ստանդարտներին ներդաշնակեցնել է: Այն ապահովում է ընդհանուր մոտեցում՝ ի աջակցություն որոշակի ռիսկերի կամ ոլորտների հետ կապված ստանդարտների և չի փոխարինում այդ ստանդարտներին:

© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Հավելված Բ(B)

(տեղեկատու)

Անվտանգության կառավարման գործիքների մասնակի օրինակներ

Ռիսկերի գնահատումը ներառում է տեղեկատվության համակարգված կիրառում՝ ռիսկերը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու համար: Նկարներ Բ(B).1-ում, Բ(B).2-ում, Բ(B).3-ում և Բ(B)Բ.4-ում ներկայացված մասնակի օրինակները ցույց են տալիս ռիսկերի կառավարման գործընթացի նշված փուլերից յուրաքանչյուրը ձեռնարկելու պարզ գործիքներ:

Risk reference file						
Name of service:				Date of risk critical analysis:		
				Compiled by:		Date:
Adventure tourism activities involved:				Revised by		Date:
Ref.	Stage	Place of occurrence	Hazard: what may happen and how	Consequences of an event	Conseque as	

Նկար Բ(B).1 – Ռիսկերի աղյուսակի տեղեկատու օրինակ

Level	Description	Example of description
1	Insignificant	No injuries, minor financial loss
2	Minor	Treatment with first
3	Moderate	Medical treat
4	Major	Severe inj financia
5		

Նկար Բ(B).2 —Որակական չափանիշների հաջորդականության մակարդակների օրինակ

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Level	Description	Example of descriptic
A	Almost certain	It is expected to occur most of the times
B	Probable	It is likely to occur most of the tim
C	Possible	It may occur sometime
D	Improbable	It is unlikel
E		
N		

Նկար Բ(B).3 — Հավանականության որակական չափանիշների օրինակ

Level	Consequences			
	Insignificant	Minor	Moderate	M
A (Almost certain)				
B (Probable)				
C (Possible)				
D (Improbable)				
E (Rare)				

Caption:
E: extreme risk, immediat
H: high risk, top man
M: moderate

Նկար Բ(B).4 — Հավանականության և հետևանքների դասակարգման օրինակ — Ռիսկի որակական վերլուծության մատրիցա — Ռիսկերի մակարդակ

Յուրաքանչյուր կազմակերպություն պետք է սահմանի և օգտագործի իր իրականությանը, մշակույթին և գործունեությանը առավել համապատասխան գործիքները:

Միակ լուծում գոյություն չունի: Լրացուցիչ օրինակների համար տես ԻԷԿ 31010 ստանդարտը:

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Մատենագիտություն

[1] ԻՍՕ 9000:2005, Որակի կառավարման համակարգեր. Հիմնական դրույթներ և բառարան

[2] ԻՍՕ 19011, Կառավարման համակարգերի աուդիտի վերաբերյալ ղեկավար ցուցումներ

[3] ԻՍՕ /ՏՌ 21102, Արկածային զբոսաշրջություն. Առաջնորդներ. Անձնակազմի կոմպետենտություն

[4] ԻՍՕ 21103, Արկածային զբոսաշրջություն. Տեղեկատվություն մասնակիցների համար

[5] ԻՍՕ 31000, Risk Ռիսկի կառավարում. Սկզբունքեր և ղեկավար ցուցումներ

[6] ԻՍՕ Գայդ 73:2009, Ռիսկի կառավարում. Բառարան

[7] ԻԷԿ 31010, Ռիսկերի կառավարում. Ռիսկերի գնահատման մեթոդներ

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Նախագիծ 2-րդ խմբագրություն

ՍԴ 03.200; 03.080.30

Գինը սահմանվում է 29 էջի համար

©ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD - Բոլոր իրավունքները պաշտպանված են